Հավելված
ՀՀ փոխվարչապետի
N 938 - Ա որոշման

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՊԱՇՏՊԱՆԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ, ՎԵՐԱՁԻՆՈՒՄ ԵՎ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Վերականգնողական կենտրոնի մեծացում և պրոթեզարանի կառուցում 2020 թ. սեպտեմբերի 27-ին մեկնարկած պատերազմի հետևանքով մեր շահառուների թիվը կտրուկ աճել է: Վիրավոր զինվորներին սպասարկելու համար այժմ անհրաժեշտ է, որպեսզի կենտրոնն իրականացնի ստացիոնար և ամբուլատոր պայմաններում բուժում ստացող զինհաշմանդամների ընդունելության հնարավորությունների մեծացման ծրագիր: Այն ենթադրում է վիրավոր զինվորների վերականգնողական բուժման համար խիստ անհրաժեշտ պրոթեզարանի, էքսպրես լաբորատորիայի, ֆիզիոթերապիայի և էրգոթերապիայի նոր մարզադահլիճների ստեղծում՝ համալրված նոր սարքավորումներով: Կենտրոնի թողունակությունը պետք է մեծանա շուրջ 60 մահճակալով, այդ պատճառով պետք է ստեղծել նաև նոր հիվանդասենյակներ: Ճիշտ ժամանակին իրականացվող վերականգնողական բուժումը բազմաթիվ վիրավոր զինվորների հնարավորություն կտա խուսափել հաշմանդամությունից, մյուս դեպքերում՝ հնարավորություն կտա պահպանել հաշմանդամության առկա վիճակը՝ չխորացնելով այն: Ինչպես նաև, թողունակության մեծացման ծրագրի շրջանակում կառուցվելու է ժամանակակից պրոթեզարան վիրավորման հետևանքով վերջույթները կորցրած զինհաշմանդամներին որակյալ պրոթեզավորում և օրթեզավորում անելու համար: Մեր զինհաշմանդամների կյանքի որակը բարելավելու համար պրոթեզավորման ծրագիրը ենթադրում է, որ ամպուտացիայից մինչև դուրսգրում ամեն ինչ պետք է տեղի ունենա մեկ վայրում՝ համալրված բոլոր վերապատրաստված մասնագետներով:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ակնկալում ենք ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից:
3.	Բարեգործը	✓ «Իմ Քայլը» բարեգործական հիմնադրամ

		Իրավաբանական հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Տերյան 1/1, բն. 5 ՀՎՀՀ 01282864 ✓ Veterans of Armenia Address 1146 N Central Ave #684 Glendele CA 91202 Tax ID 85-3766890 ✓ Հայ օգնության միություն Իրավաբանական հասցե՝ Նալբանդյան 116/24 ՀՎՀՀ 01512885 ✓ Ուան Արմենիա բարեգործական հասարակական կազմակերպությունը Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Մելիք Ադամյան 2/2, 5-րդ հարկ ՀՎՀՀ՝ 02622324 ✓ «Лира-А» Благотворительный фонд Адрес 142007, Московская область, г. Домодедово, ул. Илюшкина, дом 2 литера 6б, ИНН 5009125444 ✓ Այլ ոչ առևտրային /կազմակերպությունների և անհատների հանգանակություններ
4.	Ծրագիրը կատարողը	«Աջակցություն վիրավոր զինվորներին և զինվորական հաշմանդամներին» բարեգործական հասարակական կազմակերպություն Իրավաբանական հասցե՝ ք. Երևան, Մ. Ավետիսյան 4 փ., 6/19 ՀՎՀՀ 00904586
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ, Ք. Երևան, Աբովյան 58, առողջապահության բնագավառ
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի բյուջեն 800,000,000 ՀՀ դրամ է ✓ «Իմ Քայլը» բարեգործական հիմնադրամը նվիրաբերում է 230,000,000 (երկու հարյուր երեսուն միլիոն) ՀՀ դրամ ✓ Veterans of Armenia կազմակերպությունը նվիրաբերում է 50,000,000 (հիսուն միլիոն) ՀՀ դրամ ✓ Հայ օգնության միությունը՝ 100,000,000 (հարյուր միլիոն)ՀՀ դրամ ✓ «Лира-А» Благотворительный фонд-ը նվիրաբերում է 100.000.000 (հարյուր միլիոն) ՀՀ դրամ

		✓ Ուան Արմենիա բարեգործական հասարակական կազմակերպությունը նվիրաբերում է 94,000,000 (ինսունչորս միլիոն) ՀՀ դրամ ✓ Այլ ոչ առևտրային կազմակերպությունների և անհատների հանգանակություններ՝ 226,000,000 (երկու հարյուր քսանվեց միլիոն) ՀՀ դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Բարեգործական ծրագրի շահառուներն են հայրենիքի պաշտպանության ժամանակ վիրավորում ստացած կամ առողջական խնդիրներ ունեցող բոլոր անձիք:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	01/12/2020 թ. – 01/12/2022 թ.
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	✓ Հիմնանորոգում-350.000.000 ՀՀ դրամ ✓ Վերազինում-300.000.000 ՀՀ դրամ ✓ Կահավորում-150.000.000 ՀՀ դրամ Միջոցառումները նախատեսված է իրականացնել 01.12.2020 թ. – 01.12.2022 թ.
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1. Տեխնիկական վերահսկողության պայմանագիր – 5,000,000 դրամ 2. Նախագծում – 4,000,000 դրամ 3. Շինարարական աշխատանքների մասով ծառայությունների մատուցման պայմանագիր – 166,000,000 դրամ 4. Շինանյութի ձեռքբերում – 175,000,000 դրամ 5. Կահույքի ձեռքբերում – 150,000,000 դրամ 6. Բժշկական սարքավորումների ձեռքբերում – 300,000,000 դրամ
11.	Ծրագրի իրականացման հետ կապված ծախսերը	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառա-վարման մարմինների, այլ	Մեր գործընկերներն են՝ Երևանի պետական բժշկական համալսարանը և ՀՀ պաշտպանության նախարարությունը

	կազմակերպությունների հետ	
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեղանիզմների նկարագրությունը	Օրենքով սահմանված կարգով հաշվետվությունների ներկայացում ծրագրի բարեգործներին և իրավասու մարմիններին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

01.12.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ